մեք փութամբ տալ մի ընդհանուր տեսութիւն Թէոդոսիոյ ծովածոցին և այնոր ափերուն մօտ ազգիս անցելոյն։

Բ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տաւրիական Թերակղզւոյն արևելեան ծայրը, Սև ծովուն եզերք, շինուած է Նախաքրիստոսեան հին քաղաքը Թէոդոսիա. ի հարաւոյ, յելից և ի մտից արևու կը բարձրանան կաւեղէն բլուրներ, որոց վերին մասը լերկ, այլ ստորին մասը ծածկուած է քաղցրահաճակ և գիներեր այգիներով։

Ծովը՝ յարևելից ման գալով, մտած է ցամաքին մէջ, մեր երկաթագիր (Տ տիւն) տասին վերին կիսաձևով, որ և ընդարձակ տարածութեամբ և խոր յատակաւն ապահով նաւահանգիստ է մեծամեծ նաւերու։ Քրիստոսեան թուականէն 600 տարի առաջ՝ նշանաւոր եղած է Թէոդոսիա ծաղկեալ ծովային վաճառականութեամբ, այլ ի միջին դարս, փոխելով իւր անունը ի Կաւա (Կաֆա), ի ծայր փառաց հասած է Գենուացի և Հայ վաճառականաց ձեռքով։ Ի ԺԴ դարէ և այսր յաճախած են Հայք այս վաճառաշահ նաւահանգիստը, որոյ վկայք են ցարդ մնացած քանդակագործ և այլ գրաւոր աւանդութիւնք։ Յառաջին կէս ԺԴ դարու, կէս միլիոն հայասեռ ժողովուրդ, և ըստ գրելոյ մի հայկական յիշատակարանի, «Իշխանք և ազնուականք» բնակութիւն հաստատած են